

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ԱՃԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԳՈՒՐԳԻՍՏԱՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՒ ԲԱՂԷՇ

Արևմտեան Տիգրիսի վերին առաջանում ամենաբարձրանիստ քաղաքն է հանքային խապուրը (Մազէն-խապուր), որ շինուած է ծովից 1039 մետր բարձրութեան վրայ, կամ 25՝ մետր բարձր մերձակայ հեղեղատի: Մօտակայ Մաղարատ սարը առատութեամբ տալիս է պղնձի քրայական նիւթ, որը յոյն, հայ և թուրք գործաւորները մատաճ հալում են տեղի ու տեղը, իսկ ամենամեծ մասը ուղարկում են Ասիական թուրքիայի շահաստան քաղաքները՝ Դիարբէքիր (Տիգրանակերտ), Էրզրում, Տրաքիզոն: Կար ժամանակ որ բոլոր Արևելցիք՝ Կոստանդնուպոլսից մինչև Սպահան, պղնձի ամեն ամանեղէն տանում էին Մազէն-խապուրից: Դարիս սկզբին՝ վերին Տիգրիսից Բազդազ արտահանուած տարեկան քրայական նիւթը հասնում էր 400 տակառաջատի<sup>1)</sup>: Բայց այդ ժամանակից ի վեր պղնձի արտագրութիւնը շատ նուազել է: Հազիւ թէ արդիւնագործւում են արծաթաբեր արձձի շերտերը, իսկ սոկին և արծաթը այլ ևս չեն հանւում: Արզանա (Արզնի) քաղաքը, որ գտնւում է խապուրից հարաւ-արևմուտք՝ հեղեղատին իշխող մի սարաւանդանի վրայ իւր Արզանա-Մազէն կամ Արզնի — Հանք մականունը պարտական է մերձակայ հանքային հորերին:

Դիարբէքիր կամ Դիարբէքրը, այսինքն է «Բէքրի երկիրը» այսպէս կոչուած արարական Բէքր ցեղի անուամբ որ տիրեց նրան

1) Olivier, Voyage en Perse fait dans les années 1807, 1808 A. 1809.

եօթներորդ գարում, նախկին Ամիգ կամ Ամիգան է և յաճախակի էլ կոչուում է կարա-Ամիգ, «Ալե Ամիգ» խանձաքարի գոյնից առնուած, որից շինուած է քաղաքը: Գիարբէքիրը ամենայաջող աշխարհագրական գիրք ունի: Ծովից 626 մետր բարձր շինուած, 38-դ աստիճանի տակ, ունի հարաւային Վրանայի կլիման և շատ մօտ է գտնուում երկու մեծ գետերը միմեանցից բաժանող պարանոցին, այնպէս որ այդ երկու աւազանների գլխաւոր ճանապարհների միացման կեդրոնումն է, Միջագետքի «կղզու» վերին ծայրում: Բայի այս, զանազան ցեղերի շիման կեդրոնատեղի է նա, այդ տեղումն են հանդիպում միմեանց թուրքերը, հայերը, քրդերը, արաբները: Այստեղից փոքր ինչ հարաւ արաբական լեզուի հիւսիսային սահմանագիծն է անցնում և սկսում է թրքական բարբառի գօտին: Գիսրբէքիրն ունի նաև այն առաւելութիւնը, որ մի ընդարձակ, սիկահողային և շատ բերրի գաշտ ունի: Ամենահին ժամանակներից Ամիգի գաշտերը եղել են Առաջաւոր Ասիայի «ամբարներից» մէկը և այս տեղական առանձնաշնորհը միացած յաջողակ դրքի հետ տուել են Գիարբէքիրին՝ խաղաղութեան տարիներում, առաջին կարգի կարեւորութիւն: Նա ունեցել է իւր պարիսպների մէջ հարիւրաւոր հազար բնակիչ և շատ պաշարումներ այն տեղից աւելի բազմաթիւ զոհեր են տարել, քան թէ նորանց այս օրուայ բնակիչների թիւն է:

Քաղաքը կանգնած է նկարչական գիրքով՝ նախկին հրաբուխ կարաջա - գաղից իջած խանձաքարեան հրահոսանքի ծայրում: Աջ կամ արեւմտեան ափի սարտէզներին իշխող վերջնական քարաժայռը 30 մետր բարձրութիւն ունի Տիգրիսից: Այս տեսարանին աւելի ևս վեհութիւն են տալիս բոլորչի աշտարակներով առամնաւոր պարիսպները: Դեռ լաւ պահպանուած սև պատնէշը ձրգուում է ութ քիլոմետր տարածութեամբ, կաշելով մի կողմից մի աւերակ բերդի բառանկիւնի զանգուածին, միւս կողմից՝ մի տասնակամար կամրջի, որ վերջինն է գետի վերայ ձգուած այժմեան կամուրջներից: Ներքուստ քաղաքը խաւար է, տխուր, խանաւ և վատառողջ, փողոցները նեղ և ցեխոտ, գլխաւոր պողոտան, այն է՝ բազարի փողոցը որտեղ կատարուում է բոլոր շարժողութիւնը,

հազիւ 3—4 մետր լայնութիւն ունի: Դիարբէքիւրի տարելէքըը գեռ աւելի էլ վտանգաւոր է քան թէ Հալէպինը<sup>1)</sup>: Խանութները ոչ սրակաս Բաղդադի խանութներից լիքն են թէ տեղական և թէ եւրոպական ապրանքներով: Ծախու առարկաների մէջ շատը տեղական արդիւնագործութիւն են, ինչպէս օրինակ՝ պղնձի անօթներ, ցանցաշէն (չիֆթիշի) զարդեղէն, ասուիններ (շալեղէն), սեկեղէն, ծխախոլ (չիբուխ), մետաքսի և բամբակի պատտաւներ: Քաղաքում բանոյ ոստայնանկների հէնքերի թիւը մօտ հազար հինգ հարիւր է: Հրապարակում խոնուած ամբօխը Առաջաւոր Աօխայի սմենախառնիճաղանճներիցն է: Քրդեր, Հայեր, Թուրքեր և Թուրքմէններ, Քաղզէացիք, Նեստորականներ, Յակոբիկներ, եգիպտացիներ, և Հրէաներ, Ասորիներ և Յոյներ կազմում են բնակչութիւնը, որոնց վրայ նորերս աւելացան բաւականաչափ բուլղարներ, թուրք կառավարութեան ձեռքով արքսորուած եւրոպայից<sup>2)</sup>: Բնակիչների գրեթէ կէսը քրիստոնեաներ են և մկիթները եկեղեցիներից աւելի բազմաթիւ չեն: Եկեղեցիներից մէկը կանգնած է երրորդ կամ չորրորդ դարի մի հռոմէական շինութեան տեղում: Հին շինութիւնից մնացել է ճակատը, ստորին յարկի թեթեակի — ձուածե կամարներով և վերին յարկի վայելչաշէն սիւներով, որոնց իւրաքանչիւրի խոյակների արաբանկարներն և սիւնագլուխների քանդակները տարբեր տարբեր են:

Տիգրիսի վերին հովիտները և օժանդակները հարուստ են աւերակներով և նոր գիւղաքաղաքներն էլ շինուած են նախկին քաղաքների տեղը: Հին շինութեանց ամենահոյակապ աւերակներն են մի կամրջի մնացորդները, որի կոտրած կամարները կախ են ընկած Տիգրիսի վրայ 25 մետր բարձրութեամբ, Բատման-Սուի և Տիգրիսի խառնուրդից ոչ հեռու: Աւազաքարի ահագին կոտորներ ցրիւ են ընկած մերձակայ գետածորում և սրանց մէջ այրեր են փորուած բնակութեան համար: Փուլքը ամբողջ մի գիւղ է դար-

1) Ernest chantre, ձեռագիր:

2) Cernik und Schweiger—Lerchenfeld, Ergänzungsheft zu Petermanns Mittheilungen, n. 44, 45.

ձեւ, մինչև անգամ բազար էլ ունի<sup>1)</sup>: Մայա-Ֆարքէյն կամ Ֆարքէյնը գտնուում է Դիարբէքերից հիւսիս արևելք՝ փուլ եկած քարակարկառների մէջ<sup>2)</sup>, որի շուրջն է սլառում Բատման Սուլի օժանդակ վասիներից մէկը, ճիւղաւորուելով պարտէզներում: Այս Ֆարքէյնն է Բիւզանդացիների Մարտիրոսոպոլիսը, ուր մինչև օրս էլ կանգուն են հինգերորդ դարում շինուած մի հոյակապ մատրան աւերակները: Այդ քառութեան յիշատակարանը շինուած էր այն հազարաւոր նահատակների ոսկորների վրայ, որոնց կոտորեց Շապուհը: Աւելի արևելք՝ Բատման-Սուլի վրայ կայ մի պարսկական կամուրջ, որի կամարանկիւնը 50 մետր բարձր է հեղեղատից: Նկարչական շուգուն (խողով, խազու) իրար վրայ շինուած նորաշէն տներով կանգնած է մի աւերակ ամրոցի վրայ, իսկ շրջակայքի ձորերից մէկում գտնուում է մի հայկական եկեղեցի՝ հինգերորդ դարից մնացած, ուր ամեն տարի ուխտաւորներ՝ Ասորիքից, Հայաստանից և Ռուսաստանից ուխտ են գալիս «իսկական խաչափայտի» մի մեծ մասունքին: Սղերդը (Սերտ կամ Սաերտ) Բոտան-Սուլի վրայ է և նմանապէս աւերակների վրայ է շինուած: Դ'Անուիլը և ուրիշ պատմական աշխարհագիրներ կարծում են թէ այդ (հին) Տիգրանակերտը լինի: Սեպաձև (բենուագիր) արձանագրութիւններ՝ գրուած արմէնիաք—հին հայկական լեզուով, երևում են այս երկրի զանազան վայրերում, փորագրուած քարաժայռերի կողմ երեսների վրայ: Մշակուած գաշտում, սեխաստանների և վարունգանոցների մէջ, փոքրիկ բարձր աշտարակները տալիս են Սղերդին բերդակներով շրջապատուած ռազմավայրի կերպարանք: Դիարբէքերից յետոյ վերին Տիգրիսի ամենամեծ քաղաքն է սիրուն Բիտլիսը—Բաղէշը, ծովից 1500 մետր բարձր, վան լճի հարաւ—արևմտեան անկիւնից ոչ հեռու: Կարմիր և գորշ հրահոսանքը Նիմրուգ—գալից իջնելով կազմել է գահալէժ սարաւանդներ կորստուած խոխոմներով, որոնց յատակում թաւալում են ալմրկաձայն հեղեղային ջրերը՝ մատամբ հանքային և ջերմկային, և

1) Von Moltke, Zustände und Begebenheiten in der Türkei;— Carl Ritter, Asien.

2) Ernest Chantre, ձեռագիր:

սրանցից է կազմուած Բիտլիոսի գետը: Մի հին ամրոց բարձրանում է գետ սխառնուբղի մօտ, գետափները միացած են սրանկիւն (ogivale) կամարներով, իսկ լայնանիստ մինարէների լուրջի աշտարակները վեր են բարձրացնում իրենց շրջանաձև աշտարակները միահարթ տանիքաւոր շինութիւններից, պարաէղներից և ծառատունկներից <sup>1)</sup>: Բաղէշում, որի բնակիչների մի մասը հայեր են, գործւում և ներկւում են պաստառներ: Իբրև գլխաւոր կայան Տիգրիսի և վերին Եփրատի հովիտների միջև Բաղէշն ունի փոխանակութեան ահագին առևտուր:

#### ՈՒՌՆԱ, ՄԾԲԻՆ, ԹԻՒՆ-ԷՐՄԷՆ

Եփրատը Տիգրիսի չափ առատաջուր չէ և ոչ էլ նրա չափ մօտիկ է լեռների բերրի հովիտներին: Իւր աջ ափը սահմանափակուած է անսպառի աւազներով և կաւերով, ուստի և աւելի քիչ քաղաքներ և գիւղաքաղաքներ ունի իւր եզերքներին, մասնաւորապէս կրճերից դուրս գալուց յետոյ մինչև բուն Բաբելաստանը: Թէև իւր ընթացքն է կազմում Առաջաւոր Ասիայի մեծ անկիւնագիծը՝ Աղեքսանգրեակի և Պարսիյ ծոցերի միջև, այսուամենայնիւ Եփրատը մի մեռեալ գետ է համեմատած արևելեան միջագետքի ջրհոսանքներին: Հնումը այդպէս չէր: Ազգերի պատմութեան մէջ մի զարմանալի աշխարհագրական հակադրութիւն է տեղի ունենում գետային երկու հոսանքների միջև: կրճերից դուրս գալուց յետոյ մինչև Շոշատան (Սուզիան) մեծամեծ քաղաքներ շարուած էին Տիգրիսի՝ այդ Ասորական գետի՝ Ափերին, մինչդեռ ստորին Միջագետքում՝ սկսած Մարական պարսպից, գրեթէ բոլոր քաղաքները դասաւորուած էին կարգով Եփրատին մօտիկ կամ նրա ափերին <sup>2)</sup>: Երկու տէրութեան՝ Ասորեստանի և Բաբելաստանի հակառակութիւնը համապատասխանում էր երկու գետերի հակադրութեանը:

1) Hommaire de Hell; Ainsworth; Deyrolle; Chautre; Barry.

2) Ménant, Babylone et Chaldée; — Hommel, Vorsemitische Kulturen.

Եփրատի երկու ճիւղերի խառնուրդից ներքև՝ մինչև նրա տալ-  
լուսական կրճերից դուրս գալը՝ միմիայն ազգատիկ գիւղաքաղաքներ  
են գտնուում գետի ափերին, բայց Թորմա-Սուի կողմնական հով-  
տում կան երկու կետրոնատեղի՝ Մալաթիան և Ազբուզուն, որոնց  
մինչև երթևեկում էր մի ժամանակ՝ վեց ամսից վեց ամիս՝ քաղաքի  
գրեթէ ամբողջ բնակչութիւնը: Մալաթիան, հռոմէացիների Մելի-  
տէնը, ձմեռանոց քաղաք էր, բայց շրջապատուելով ոռոգման  
ջրանցքներով և սղոյուած գաշտերով՝ վատառողջ գարձաւ, ուստի  
և հէնց որ շոգերն սկսուում են՝ բնակիչները թողնում են նրան  
Ազբուզու գնալու համար, որ ամառանոց քաղաք է, շինուած հա-  
րաւում՝ մի աւելի բարձր հովտի մէջ<sup>1)</sup>: Բայց այս անընդհա-  
տ երթևեկութիւնները մեծ մասամբ դադարել են, որովհետև ժողո-  
վրդեան մեծամասնութիւնը մշտական բնակութիւն հաստատեց  
հարաւային քաղաքում, որ հիանալի բնակավայր է, ուր իւրա-  
քանչիւր տուն իւր աղբիւրն ունի, իւր պարտէզը, իւր ծառա-  
տանը: Թորմայի վերին հովտի երկու քաղաք՝ Կիւրին և Տէրէնատ  
(Գուռուն և Գերէնգէ) Մալաթիայի նման ամառը գրեթէ ամայի  
են մնում: Բոլոր ժողովուրդը գալթում է գէպի շրջակայքի փոք-  
րիկ ամառանոցները: Կիւրինցի պանդուխտները, որ ցրուած են  
պետութեան բոլոր մասերում, նշանաւոր են իրենց նախաձեռնող  
ոգով:

Գամնագէնի նախկին մայրաքաղաք Սամսատը, Ղուկիանի հայ-  
րենիքը, որ մի ժամանակ այնչափ նշանաւոր էր իբրև անցատեղի  
և իբրև հռոմէական լեգէոնների բերդաքաղաք, շինուած Եփ-  
րատի կրճերի բերանում, այժմ մի սոսկ աւերակ գիւղաքաղաք  
է, աւելի նուազ բնակչութեամբ, քան թէ փոքրիկ Սուվերէկը,  
որ շինուած է մի կողմնական հովտում, Գիարբէքիրի ճանապարհի  
վրայ: Այս երկու քաղաքներում մնացել են միայն արուեստական  
վիթխարի հողաբլուրներ, որոնց վրայ շինուած էին միջնաբերդեր,  
բայց շրջակայքում՝ գետի արևմտեան կողմը բարձրացող մի լեռան

1) Von Moltke, Das Nördliche Vorland Klein—Asiens; — Carl Ritter, Asien.

վրայ՝ ծովի մակերևոյթից 1800 մետր բարձր՝ նորերս գտել են Գոմմագէնի թագաւորների փառահեղ գամբարանները՝ զարդարուած արձաններով, որ մինչև 17 մետր բարձրութիւն ունին<sup>1)</sup>։ Բնիկները այդ համարում են Ներքովդի Միջագետքի աւաասպելական դիւցազնի՝ գերեզմանը, որից և Նիմյուզ-գաղ անունը, որ տրուած է այդ լեռներին։

Սամոսաից ներքև Եփրատն ընդունում է մի հեղեղատ, որ իջնում է մի նեղ հովտից՝ շրջապատուած կրային լեռներով և ուր գտնուում է թուրքական Բեհենզի քաղաքը։ Աւելի ներքև Հռոմկլան, «Հռովմէացիների բերդը», Հայաստանի կաթուղիկոս—Պատրիարքների նախկին աթոռանիստը, Սամոսա:ոի նման մի ժամանակ շատ յաճախուած անցատեղի էր, մինչդեռ այժմն Բիր, Ալբիրատ կամ Բիրէջիկն է այն քաղաքը, ուր կատարւում է կարւանների ամենօրեայ անցուգարծը։ Այս տեղումն էր, ըստ յունական աւանդութեան, որ Բագոսը ձգեց աւաջին կամուրջը Եփրատի վրայ, որպէս զի գնայ Հնգկաստանին տիրելու<sup>2)</sup>։ Աջ ափում մի կղզիացած քարաժայռ կրում է իւր վրայ մի լայնածաւալ ամրոցի նկարչական փլատակները, որ հնումը իշխում էր անցքին։ Այս քարաժայռը ձգւում է դէպի հարաւ բլուրներով, որոնցից շինութիւնները ամբիթատրոնի ձևով իջնում են դէպի Եփրատի ափը։ Աստիճանաբար ցածացող տների ետևում երևում են սպիտակ մինարէները, իսկ գետի եզերքներում շարք շարք կանգնած են, երկու քիլոմետր երկայնութեամբ, միմիկ կիպարիսներ։ Բերէջիկը գլխաւորապէս բնակուած է թուրքերով, բայց ունի նաև հայերի գաղութ, որ զբաղուած են մասնաւորապէս գրամանցային (տրանզիտ) վաճառականութեամբ։ Իսկ բերդի մօտ բազմաթիւ քուրդ ընտանիքներ որջացիլ են աւերակների և կրային քարաժայռի անձաւների մէջ։ Բերէջիկի շուրջը սփռուած են գարու արտեր, ուր անց ու գարձ անող բազմաթիւ կարաւանները իրենց ուղտերի սղաշարն

1) Sester und Puchstein, Verhandlungen der Gesellschaft für Erdkunde zu Berlin, 1882.

2) Oppert, Expédition scientifique en Mésopotamie.

են տեսնում: Արևմտքում՝ Եփրատի մի պտոյոյտի մօտ կանգնած է Բալիկս հողաբլուրը՝ ուր գտնուել են հռոմէական թանկագին նկարներ և միւսինն (մնգայիք), բայց գրեթէ բոլոր արժէքաւոր առարկաները ջարդոտուած են եղել, իսկ բլուրը Բիրէջիկի բնակիչներին ծառայում է իբրև քարհանք<sup>1)</sup>: Բիրէջիկի հիւսիսում՝ գէպի Տաւրոսի առաջաւոր լեռնաշղթաները տարածուած լերկ դաշտը նշանաւոր է իւր խանձաքարային անհամար փլատակներով, որ ցրիւ են ընկած աւազաքար ժայռերի վրայ<sup>2)</sup>:

Բիրէջիկից Աղեքսանդրեակ գնացող ճանապարհը, որի տեղը ուշ թէ շուտ բռնելու է երկաթուղին, անցնում է Նիզիք փոքրիկ քաղաքով և նրա ձիթենիների ծառատաններով, ուր 1839-ին տրուած ճակատամարտը բացեց Երրահիմփաշայի եգիպտական զորքերի առաջ հիւսիսի ճանապարհը և պատճառ եղաւ Եւրոպայի միջամտութեան: Այդտեղ և կամ այդտեղից ոչ շատ հեռու, Փոքր-Ասիայից և Ասորքից գէպի Եփրատը տանող ճանապարհի վրայ, արդէն ուրիշ շատ անգամ հանդիպել են միմեանց յունական, բիւզանդական, պարսկական բանակներ: Այս կողմերի գրխաւոր քաղաքն է Այնթաբը, որ նմանապէս պատկանում է Եփրատի աւազանին և շինուած է ամիրիթատրոնի ձեով Սաջուրի հովտին իշխող հիւսիսային դառիվայրերի վրայ: Քաղաքի և գետի մէջտեղում կայ մի արուեստական հողաբլուր՝ սալերով ծածկուած՝ ինչպէս որ լինում են Միջագետքի և Ասորիքի հողաբլուրների մեծ մասը, և կրում է իւր վրայ մի լքուած ամրոցի փլատակները, որի շուրջը ճախրում են թռչունները երամներով: Քաղաքը բնակուած է գլխաւորապէս թուրքմաններով և ուրիշ արհեստ չունի բացի բրդի լուացումից և կաշեգործութիւնից, բայց իբրև գլխաւոր կայան Բիրէջիկի և ծովի միջև՝ ունի գրամանցային մեծ առուտուր: Այնթապից հարաւ-արևելք Սաջուրը երկճըլուում է, մի արուեստական ջրանցք անցնելով 250 մետր երկայնութեամբ ներքնուղիով՝ գնում միանում է Գէօկ-սու-ի առատ

1) Cernik und Schweiger-Lerchenfeld, արդէն յիշուած:

2) Von Moltke, Das Nördliche Vorland Klein—Asiens.

ջրերին, որ հոսում է հարաւ՝ դէպի Հալէպի դաշտերը: Այ՛ ջր-  
բանջքը, որ տասներեքերորդ դարից է և նորերս նորագուած՝  
միացնում է Եփրատի աւազանը այն պարփակեալ գոգաւորութեան  
հետ, որի յատակումն է Հալէպը <sup>1)</sup>:

Այս երկրում, որ չորս դար շարունակ կայսերութեան սահմա-  
նագիծն էր, բազմաթիւ են հռոմէական աւերակները: Եփրատի  
աջ ափին՝ ոչ հեռու Սաջուրի գետախառնուրդից, Զարաբիսում  
(կամ Զերաբլուս) երևում են մի տաճարի փլատակներ, որ կարծ-  
ւում էր երբեմն թէ նախկին Եւրօպասի (Europus) տաճարը լինի:  
Սնգլիացի Հենդերսոն և Կոնդեր հետախոյզների փորուածքները  
հաստատեցին, որ այս՝ խորհրդաւոր և անծանօթ Հիտայիս Ժո-  
ղովրդի այնչափ երկար Ժամանակ որոնուած կարբեմիշ մայրա-  
քաղաքի աւերակներն են եղել: Խանձաքարային և կրային սալերի  
վրայ փորագրուած քանդակները մի ոճ ունին, որ թէև ինքնու-  
րոյն, բայց յիշեցնում է ասորեստանականը, իսկ արձանագրու-  
թիւնները զրոշմուած են նշանագրերով — հերոգլիֆներով <sup>2)</sup>: Սա-  
ջուրից հարաւ, որ արաբական և թրքական լեզուների սահմա-  
նագիծն է, կայ մի ուրիշ աւերակ քաղաք, յաճախուած հնախօս-  
ներից — Բամբիւկիան, այժմեան Մամբիջը, որ մինն է այն բազմա-  
թիւ ներապոլիսներից (Արեգ քաղաք), որ երբեմն նուիրուած  
էին արեգակին և «մեծ դիցուհուն»: Այս քաղաքը կոչւում էր  
նաև Մագոգ:

Բերէջիկից արևելք՝ Մուսուլի ճանապարհին՝ կարաւանների  
առաջին մեծ իջևանն է Օրֆան, Ուրֆան, հին Ուռհան (Ուռհաս),  
խաչակիրների Եղեսիան: Այս քաղաքը շինուած է Եփրատի Նահր-  
բելիքով անցնող օժանդակ կարա-չայի արևմտեան ափին և յե-  
նուած է Թոփ-դաղի առաջաւոր բլուրների վրայ: Թոփ-դաղը մի-  
ջին դարերում անուանւում էր «Սուրբ լեռան», իւր կողերի վրայ  
շինուած բազմաթիւ մենաստանների պատճառով: Օրֆայի գղեա-  
կը, ինչպէս և սահմանի վրայ գտնուող բոլոր ամրութիւնները,

1) Rousseau; Carl Ritter, Asien, Vol. X;—Cernik, յիշուած:

2) Sachau, Reise in Syrien und Mesopotamien.

շինուած է Յուսաինիանոսից, որ երբ և իցէ գոյութիւն ունեցող մեծ շինողներից մէկն է <sup>1)</sup>: Գլեակը հանգչում է մի գահալէժ հանդիպագօտու վրայ, որ շրջապատուած է չորս կողմից կարծր ժայռում փորուած 12 մետր խորութեամբ խրամով <sup>2)</sup>: Մի եռանկիւնի սարիսպ՝ քառակուսի աշտարակներով, միանում է գլեակի ամբուլթիւններին և անջատում է քաղաքը կանաչագեղ ծառատաններից և ստղառատ պարտէզներից, ուր ճիւղաւորում են կարաչայի ջրերը: Ամբուլթիւնների տափարակից երևում է ամբողջ քաղաքը՝ վառած բերդի սաքում, իւր գմբէթների, մինարէների, մրգատանների, իսկ հեռուն՝ շրջակայքի բլուրների լանջերը, պատած այգիներով: Գլեակի պատուանդանից դուրս է ցայտում մի ակն՝ նախկին կալիբոհօէն, և լցնում է մի սրբազան աւազան, ուր լեղում են կիրաձկներ (cyprin), որ հաւասարապէս յարգուած են թէ հրէաներից, թէ քրիստոնեաներից և թէ մուսուլմաններից: Խալիլ կամ «Աստուծու բարեկամ» Աբրահամին նուիրուած մի մզկիթ անդրադարձնում է իւր որմերը խաղաղ ջրին մէջ, իսկ նաւենիներ, կիպարիսներ, սօսիներ հովանաւորում են աւազանի եզերքի աստիճանները, ուր գալիս են հանգչելու ուխտաւորները: Երկու սիւն, որ աւանդութիւնը վերագրում է Եբրայեցիների նախահօրը, կանգուն են բերդի մօտ իսկ ամրոցի ժայռի տակ՝ ինչպէս և շրջակայքի գահալէժների վրայ՝ բացուած կան առնուազն երկու հարիւր անձաւ, որ ձեռքով են գործուած և սրոնցից մի քանիսը դարսուելով միմեանց վրայ յարկաձև՝ երկայն ձգուած են ներքնուղիներով: Այս բոլորը նախկին դամբարաններ են, վերախօխուած բնակարանների <sup>3)</sup>: Քաղաքն ունի նաև միջնադարեան շէնքերի մնացորդներ, ինչպէս են, օրինակ՝ կուրտընէյ իշխանների՝ խաչակիրների ժամանակ

1) E. Desjardins, ձեռագիր:

2) G. Rey, Les Colonies franques de Syrie aux douzième et treizième siècles.

3) Olivier, Voyage dans l'empire ottoman.

Եզեսիայի վեհապետներին՝ պալատի մի քանի նշխարները: Օրփայի աները շինուած են կրային և բազալտեան քարից, փոփոխակի շերտերով զարսուած իրար վրայ, որ ապիս է նրանց շատ գուրեկան տեսք, և քիչ քաղաք՝ Առաջաւոր Ասիայում: Կարող է համեմատուել Օրփային աների և փողոցների մաքրութեամբ: Քաղաքի արդիւնաբերութիւնն է միմիայն բամբակեղէն և խեցի ամանեղէն, բայց դրամանցային վաճառականութիւնը շատ գործօն է: Յորենի արտահանութիւնը ահագին չափեր է ստացել և հարիւրաւոր կէս-նստակեաց բէգուին և քուրզ բնակութիւն են հաստատել մերձակայքում և Վրանսիական հիւպատի համար մշակում են Մէջէրի-խան ընդարձակ կալուածքը: Բացի հացահատիկներից, այգտեղից ստացուած է կնճիթ (քիւնհիթ), կանեփ, բամբակ և չինական եղինճ (ramie) <sup>1)</sup>:

Վերին Միջագետքի բոլոր քաղաքներն էլ անուանի են կրօնների պատմութեան մէջ: «Աստուծու բարեկամի» քաղաքից՝ Օրփայից հարաւ Հառաւնը, Նախկին Խառանը, յիշուած է Մենդոց գրքում իբրև Արրահամի հայրենիք և աստեղապաշտութիւնը երկար տևում էր այդ տեղում: Արևելքում՝ Մարդինը համբաւաւոր է իբրև կեդրոնաւայր գէպի լեռները հալածուած աղանդաւորների: Առաջ հալածողները օրթոդոքս քրիստոնեւորներն էին և յետոյ մուսուլմանները: Քաղաքի բնակիչների մերձաւորապէս կէսը բազիլացած է քրիստոնեաներից, որ պատկանում են զանազան աղանդների <sup>2)</sup>: Մարդինում խօսակցական լեզուն գլխաւորապէս արաբերէնն է, մինչդեռ Օրփայում տիրող լեզուն թուրքերէնն է: Մարդինը մզկիթների, մատուռների, մեզրեսէների և ուսումնարանների քաղաք է: Այստեղ բնակւում են մահմետական քրդեր, «քաղզէացիք», Աիւրիացիք (ասորի), յակոբիկներ, հայեր, և կաթոլիկ ու բողոքական գարձածներ, որոնք ուրոյն ուրոյն թաղերում չեն, այլ խառն են բնակուած: Մարդինի կանայք հռչակուած են գեղեցկութեամբ: Քաղաքը շատ նկարչական է, շինուած է

1) Ernest Chantre, ձեռագիր:

2) Grattan Geary, Through Asiatic Turkey.

1190 մետր բարձրութեան՝ փապարներով և ծերպերով լեցուն կրային քարաժայռի վրայ և պսակուած է մի սպիտակ ամրոցով, որ անառիկ է համարուում: Ամրոցից հարիւր մետր աւելի բարձր՝ մի սրածայր ժայռի գլխին դեռ մինչև օրս էլ մնացել է մի մարտկոց՝ դիտարանի նման բարձրացած երկրի վերևում: Մարդինը շինուած լինելով մի լեռանցամէջքի մերձակայքում, որով Գիարբէքիբը ուղղակի հաշորգակցում է Միջագէտքի դաշտալայրերի հետ և որտեղից անցնում է մի «գրեթէ կառնթաց» ճանապարհ, կարևորութիւն ունի ռազմագիտական տեսակէտից, բայց շատ դժուարամատոյց լինելով մեծ վաճառականութիւն չունի: Կարաւանները անցնում են նրա լեռների ստորոտով և ուղղակի գնում են արևելք՝ գէպի Մծրին և Մուսուլ: Մարդինից 25 քիլոմետր հարաւ—արևելք ճանապարհն անցնում է մի կրճի մօտով, որով պաշտպանուում էր բիւզանդական Դարա քաղաքը: Ատամնաւոր աշտարակներ, աստիճաններ, կամարներ, ժայռում փորուած սիւնաշարեր պահպանուել են անաղարտ. մարդ փնտուում է աչքով այն ամբօխը, որ պէտք է խռնուէր տաճարների դռանը և ստորերկրեայ մեծ քաղաքի սանդուխների վրայ, բայց ամբողջ բնակչութիւնը բաղկացած է մի քանի թուրքմէն ընտանիքից, որ որջացել են այստեղ այնտեղ, այրերի և փլատակների մէջ: Տուռ Աբգին լեռներից արևելք՝ Միգիատը Յակովբիկների մայրաքաղաքն է: Նիդիբին, Նիդիբիս (այն է՝ Մծրինը), որ Տիգրանի ակթօնիստն էր և որը հռոմէացիները բերդաքաղաք դարձրին ընդդէմ Պարթևների, այս «Յրկիորդ Անտիօքը», որ, ասում են, հարիւր հազարներով բնակիչներ է ունեցել, այժմն բռնած ունի նախկին խրամապատ տարածութեան մի շատ փոքրիկ մասը: Մի տաճարի սիւները մնացել են, նաև մի հռոմէական կամուրջ, որ ձգուած է Զախշախ աղմկալից գետի վրայ: Զախշախը Խաբուր գետի օժանդակն է: Այս խաբուրի հովտում՝ Մարդինից հարաւ-արևմուտք Զախաու հետախոյզը կարծում է՝ գտած լինել Տիգրանակերտի այնչափ երկար սրոնուած տեղը, այդ լինելու է Թէլ-Էրմէնը կամ «Հայկական Թիլը» (հողաբլուր), Գիւնայզիբ գիւղի մօտ, բայց այդ տեղում ոչ մի աւերակի հետք չէ նշմարուում: Ասուէլ-Այն կամ

«Ջրի գլուխը» խաբուրի ուղագած գաշտում մի ժամանակ կսկիւսեան չէչէնների գաղթաւայր էր, բայց շրջակայքի արաբ ցեղերը հալածեցին այդ չէչէններին, մեղադրելով նրանց ձիերի և մանուկների գողութեան մէջ: Մասամբ էլ իրենք չէչէնները հեռացան գնացին, զինուոր մտնելով թուրքական ժանդարմերիայի մէջ<sup>1)</sup> երբեմն այնչափ բազմամարդ և այժմ գրեթէ անապատ գաշախ խորքում, ուր սուղոսիում է խաբուր գետը, ձգւում է արևելքից դէպի արևմուտք Սինջարի ընդհատուած լեզնաշղթան: Այստեղի կեդրոնատեղին է Սինջարը, քրդերի Սինգալին, արաբների Բէլէգը, և եղիզիների գլխաւոր վաճառատեղին է: Պատմում են որ Ջէբէլ-Ազիզի ժայռերում՝ Սինջարից արևմուտք, մի «անյատակ» վիհ կայ բացուած, ուր իւրաքանչիւր տարի եղիզիները պատարագ են մատուցանում Վատանային, ձգելով վիհի մէջ թանկագին զարդեր, արծաթ և ոսկի փուլ<sup>1)</sup>:

(Կը շարունակուի)

1) Sachau, արդէն յիշուած;— Grattan Geary, Through Asiatic Turkey.

1) Kianeir, Vogage en Arménie, etc.